ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳՈՐԾԱՐԱՐ ԷԹԻԿԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔՀԿ-ՆԵՐԻ
ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈԱԼԻՑԻԱՅԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

«Հայաստանի համայնքների միություն» ՀԿ-ն՝ հանդիսանալով Հայաստանի ամենամեծ հակակոռուպցիոն կոալիցիայի անդամ, որպես քաղաքացիական հասարակության ներկայացուցիչ Հայաստանում՝ գիտակցում է, որ բարեվարքությունը, թափանցիկությունը, էթիկան, ազնվությունը, հաշվետվողականությունը հակակոռուպցիոն արժեքներ են, որոնցով հնարավոր է պայքարել կոռուպցիայի դեմ և ապահովել բոլորի համար արդար և հավասար հնարավորություններ: Աջակցելով հետագայում իրականացվող գործողություններին՝ մենք հայտնում ենք մեր պատրաստակամությունը և մտադրությունը.

- աջակցել և մասնակցել երկրում հակակոռուպցիոն բարեփոխումների իրականացմանը,
- նպաստել երկրում հակակոռուպցիոն բարեփոխումների գնահատման և վերահսկման արդյունավետությանը,
- նպաստել երկրում ՔՀԿ-կառավարություն կայուն, հետևողական և հաշվետու կերպով կառուցողական երկխոսության ձևավորմանը,
- նպաստել հակակոռուպցիոն արժեքների իրազեկվածության մակարդակի բարձրացմանը հասարակության մեջ, ներառյալ գործարար կազմակերպությունների համար,
- ամրապնդել և տարածել հանրության մեջ՝ ներառյալ գործարար ոլորտի ներկայացուցիչների շրջանում, հակակոռուպցիոն ծրագրերի և արժեքների կարևորությունը, հետևողական լինել գործնականում դրանց պատշաճ կատարմանը,
- զարգացնել մեր աշխատակիցների կարողությունները, ովքեր ներգրավված են մոնիթորինգի, հանրային վերահսկողություն իրականացնելու և հակակոռուպցիոն գործունեության իրականացման հետ կապված գործընթացներում,
- արգելել մեր աշխատակիցներին, գործընկերներին և նրանց աշխատակիցներին ծավալել կոռումպացված, զեղծարար և անբարեխիղճ գործունեունեություն մասնավոր և պետական սեկտորների պաշտոնյաների ու կազմակերպությունների հետ,
- միջազգային հաջողված փորձի հիման վրա նպաստել ՀՀ-ում իրական սեփականատերերի ինստիտուտի ներդրմանը՝ աջակցելով իրական սեփականատերերի գրանցամատյանների գործարկմանը, ինչպես նաև հրապարակելով մեր սեփականատերերի մասին օրենքով սահմանված անհրաժեշտ և պահանջվող տեղեկությունները,
- ձեռք բերել հեղինակություն էթիկայի, կոմպետենցիայի և բարձր որակների դրսևորման միջոցով,
- աջակցել համազգային նախաձեռնությանը, որը նպատակաուղղված է ստեղծել արդար շուկայական պայմաններ, խթանել բիզնես գործարքների թափանցիկությանը և ապահովել լավ կորպորատիվ կառավարում Հայաստանում:

«Հայաստանի համայնքների միություն» ՀԿ նախագահ
Էմին Երիցյան

(ստորագրություն)